



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/112/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

25 ապրիլի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարությանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի ապրիլի 25-ին քննելով ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության քննիչ Էդգար Արտակի Դավթյանի կողմից ներկայացված պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի վերաբերյալ թիվ ՎԻՎ/112/2025 վարչական գործը

ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, նույն օրենքի 26.1-րդ և

26.2-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության քննիչ Էդգար Արտակի Դավթյանի վերաբերյալ իրականացված բարեվարքության ուսումնասիրության շրջանակում ուսումնասիրել է վերջինիս գույքային դրությունը, ինչպես նաև՝ նախկինում ներկայացված հայտարարագրերը: Ուսումնասիրության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրականացվել է հայտարարագրերի վերլուծություն և ստուգում, որի արդյունքում պարզվել է հետևյալը՝

1) Էդգար Դավթյանը Հայտարարագրում փաստացի տիրապետվող անշարժ գույքի վերաբերյալ տվյալներ չի ներկայացրել, իսկ Կադաստրի կոմիտեից Էդգար Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի վերաբերյալ տվյալներ չեն ստացվել: Միաժամանակ, ըստ նույն Հայտարարագրում ներկայացված տվյալների՝ Էդգար Դավթյանի հաշվառման և փաստացի բնակության հասցեները տարբեր են:

2) Էդգար Դավթյանի բանկային հաշվի մնացորդը 2023 թվականի տարեսկզբին կազմել է 924,999 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին՝ 913,867 ՀՀ դրամ, մինչդեռ Էդգար Դավթյանը Հայտարարագրի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» բաժնում բանկային հաշվի մնացորդ չի հայտարարագրել:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի ապրիլի 4-ին Էդգար Դավթյանին հասցեագրել է թիվ 01/1221-2025 գրությունը՝ խնդրելով գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը, ժամը՝ 15:30-ին անձամբ կամ ներկայացուցչի միջոցով ներկայանալ Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար, իսկ 5-րդ աշխատանքային օրը, ժամը 16:00-ին՝ գործի քննությանը մասնակցելու նպատակով: Նշված գրությունն Էդգար Դավթյանը

ստացել է 2025 թվականի ապրիլի 11-ին (հիմք՝ Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված գրություն):

1.3 2025 թվականի ապրիլի 15-ին Էդգար Դավթյանը դիմում է ներկայացրել Հանձնաժողով՝ խնդրելով 2025 թվականի ապրիլի 16-ին կայանալիք վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման օրը տեղափոխել 2025 թվականի ապրիլի 15-ին, որը բավարարվել է:

1.4 2025 թվականի ապրիլի 15-ին պատշաճ ծանուցված Էդգար Դավթյանի ներկայությամբ, կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/61/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.5 2025 թվականի ապրիլի 18-ին Էդգար Դավթյանը Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկել դիմում-բացատրություն:

1.6 **2025 թվականի ապրիլի 18-ին՝ ժամը 16:00-ին** պատշաճ ծանուցված Էդգար Դավթյանի բացակայությամբ տեղի է ունեցել գործի քննությունը, որի ընթացքում Հանձնաժողովը որոշել է գործի քննությունը տեղափոխվել **2025 թվականի ապրիլի 25-ին՝ ժամը 16:00-ին**, քանի որ գործի քննարկման համար էական համարվող հանգամանքներ պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր: Նշվածի վերաբերյալ Էդգար Դավթյանը պատշաճ ծանուցվել է:

1.7 Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասը և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 15-րդ հոդվածը, 2025 թվականի ապրիլի 22-ի թիվ 01-1679-2025 գրությամբ հարցում է ուղարկվել ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Նոյեմբերյանի բաժնի պետին՝ խնդրելով տրամադրել տեղեկություն այն մասին, թե Էդգար Արտակի Դավթյանը 2023 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում Տավուշի մարզ,

Նոյեմբերյան համայնք, [REDACTED] հասցեում 90 օրից ավելի բնակվել է, թե ոչ:

1.8 Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասը և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 15-րդ հոդվածը, 2025 թվականի ապրիլի 22-ի թիվ 01-1680-2025 գրությամբ հարցում է ուղարկվել ՀՀ ՆԳՆ ոստիկանության Գավառի բաժնի պետին՝ խնդրելով տրամադրել տեղեկություն այն մասին, թե Էդգար Արտակի Դավթյանը 2023 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք, [REDACTED] հասցեում 90 օրից ավելի բնակվել է, թե ոչ:

1.9 Միաժամանակ, Էդգար Արտակի Դավթյանին բանավոր հայցվել է ներկայացնել 2023 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում 90 օրից ավել որևէ հասցեում չբնակվելու հանգամանքը հաստատող փաստաթղթեր:

1.10 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Էդգար Դավթյանի բացակայությամբ 2025 թվականի ապրիլի 25-ին, ժամը 16:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումը ու պարզաբանումները

Վարույթի մասնակից Էդգար Դավթյանը Հանձնաժողով է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը. «(...) իմ կողմից լրացված 2023 թվականի տարեկան հայտարարագրում Հանձնաժողովի կողմից արձանագրված խախտումներից առաջինի՝ փաստացի տիրապետվող անշարժ գույքերի վերաբերյալ, իմ կողմից տվյալներ չեն ներկայացվել, քանի որ ես ստանձնելով ՀՀ քննչական

կոմիտեում ինքնավար պաշտոն, ծառայողական պարտականություններս իրականացրել եմ իմ բնակության և հաշվառման հասցեից՝ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի [REDACTED] հասցեից հեռու, մասնավորապես 2023 թվականի ընթացքում ծառայությունս իրականացրել եմ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում մինչև նույն թվականի հուլիս ամիսը, այնուհետև շարունակել եմ իմ ծառայողական պարտականությունները կատարել Տավուշի մարզի [REDACTED], և նշված երկու քաղաքներում չունենալով անշարժ գույք՝ բնակության վայր, այդ պատճառով բնակվել եմ տարբեր հասցեներում՝ վարձակալական հիմունքներով /որոնք ներկայումս հստակ չեմ կարողանում մտաբերել/, այդ թվում նաև հյուրանոցներում, իսկ այդ ժամանակահատվածում 90 և ավելի օր որևէ անշարժ գույք փաստացի չեմ տիրապետել, այդ իսկ պատճառով չեմ հայտարարագրել, իսկ հայտարարագրում նշված հասցեն, որով նաև սույն վարչական վարույթի շրջանակներում ծանուցում է ուղարկվել, հանդիսացել է այդ ժամանակ՝ այդ օրվա դրությամբ այն հասցեն, որտեղ որ բնակվել եմ, որը նշել եմ, որպեսզի ունենամ նաև պաշտոնական ծանուցման հասցե, քանի որ իմ հաշվառման հասցեում ծանուցումներ ստանալու դեպքում հնարավորություն չէի կարող ունենալ ծանուցումներ ստանալ՝ աշխատանքի վայրից շուրջ 180կմ հեռու գտնվելու պատճառով: Ամփոփելով վերոնշյալը հայտնում եմ, որ ես 2023 թվականի ընթացքում 90 և ավելի օր փաստացի չեմ տիրապետել որևէ անշարժ գույք, այդ իսկ պատճառով չեմ հայտարարագրել:

Իսկ ինչ վերաբերում է իմ բանկային հաշվի մնացորդները տարեսկզբի և տարեվերջի դրությամբ չհայտարարագրելու հանգամանքին հայտնում եմ, որ բանկային հաշիվներում առկա գումարը գոյացել է միմիայն ՀՀ քննչական կոմիտեից ստացված աշխատավարձի գումարից և պարգևավճարներից, որն արդեն իսկ իմ կողմից հայտարարագրվել է, իսկ նշված ժամանակահատվածում այլ կես մեկնաբանելով հայտարարագրի կետերում լրացման կարգը, կարդալով նաև ուղեցույցը, հասկացել եմ, որ եթե արդեն իսկ ՀՀ քննչական կոմիտեից ստացված

գումարները հայտարարագրվել են, ուստի բանկային հաշվի մնացորդները հայտարարագրելով կստացվի կրկնակի հայտարարագրում, այդ իսկ պատճառով չեն հայտարարագրել, միաժամանակ մտածելով, որ այդ գումարի մասով նաև Հանձնաժողովը կարող է տեսնել ծագման աղբյուրը: Ամփոփելով մեջբերվածը հայտնում են, որ ես որևէ դիտավորություն չեմ ունեցել բանկային հաշիվներում առկա գումարներս թաքցնելու, չհայտարարագրելը կրել է զուտ հայտարարագիրը լրացնելու կարգի այլ ձև մեկնաբանելը:

Բացատրությանս կից ներկայացնում եմ իմ բանկային հաշիվների մնացորդների քաղվածքները 01.01.2023 թվականից 31.12.2023 թվականի դրությամբ, համաձայն որի՝ [REDACTED] հաշվեհամարի տարեսկզբին հաշվի մնացորդը կազմել է 870.988 ՀՀ դրամ, իսկ տարեվերջում՝ 787.785 ՀՀ դրամ, [REDACTED] հաշվեհամարի տարեսկզբին հաշվի մնացորդը կազմել է 54,011.50 ՀՀ դրամ, իսկ տարեվերջում՝ 126,081.20 ՀՀ դրամ, իսկ [REDACTED] հաշվեհամարի մնացորդը տարեսկզբին և տարեվերջին կազմել է 0 դրամ: Ուսումնասիրելով վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովի կողմից ներկայացված իմ անվամբ առկա բանկային հաշվի 2023 թվականի տարեսկզբի և տարեվերջի դրությամբ, որը համապատասխանաբար կազմել է 924.999 ՀՀ դրամ և 913.867 ՀՀ դրամ, ինչը համադրելով [REDACTED] կողմից տրված տեղեկանքների հանրագումարը նույնական են դառնում: Ուսումնասիրելով կից ներկայացված հաշվի քաղվածքը պարզ է դառնում, որ տարեսկզբին և տարեվերջին առկա դրամական միջոցները գոյացել են ստացված աշխատավարձերից, պարգևավճարներից և սոցիալաթերից, մասնավորապես 2023 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում մուտքերը կազմել է մոտ 1.901.800 ՀՀ դրամ, որից իմ անձնական կարիքները հոգալու նպատակով կանխիկացվել է, և քանի որ այդ գումարներն իմ կողմից արդեն իսկ հայտարարագրվել են որպես ստացված եկամուտներ, ուստի կրկնակի հայտարարագրում չկատարելու տրամաբանությամբ այդ գումարը որպես բանկային

հաշվի մնացորդներ չեն հայտարարագրել, դրանք չհայտարարագրելու դիտավորություն չեն ունեցել:»:

III Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/112/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության քննիչ Էդգար Արտակի Դավթյանը հանդիսանում է գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.2 Կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ Էդգար Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի վերաբերյալ տվյալներ չեն ստացվել, իսկ Էդգար Դավթյանը Հայտարարագրում փաստացի տիրապետվող անշարժ գույքի վերաբերյալ տվյալներ չի ներկայացրել, մինչդեռ Հայտարարագրում ներկայացված տվյալների համաձայն՝ Էդգար Դավթյանի հաշվառման և փաստացի բնակության հասցեները տարբեր են, մասնավորապես՝ Հայտարարագրի «Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ» բաժնի «Ա.1. Հայտարարատու պաշտոնատար անձի տվյալները» ենթաբաժնի 4-րդ կետում հաշվառման հասցեն նշված է «Հայաստանի Հանրապետություն ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳԱՎԱՌ [REDACTED] [REDACTED]», իսկ 5-րդ կետում փաստացի բնակության հասցեն՝ «Հայաստանի Հանրապետություն ՏԱՎՈՒՇ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ [REDACTED] [REDACTED]»:

3.4 Կենտրոնական բանկից ստացված տվյալների համաձայն՝ Էդգար Դավթյանի բանկային հաշվի մնացորդը 2023 թվականի տարեսկզբին կազմել է 924,999 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին՝ 913,867 ՀՀ դրամ, մինչդեռ Էդգար Դավթյանի Հայտարարագրի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» բաժնում բանկային հաշվի մնացորդներ հայտարարագրված չեն:

3.5 Էդգար Դավթյանի կողմից ներկայացվել է [REDACTED]
[REDACTED] կողմից տրամադրված հաշվի քաղվածքները, որի ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2023 թվականի դեկտեմբեր ամսվա աշխատավարձը և պարգևավճարը կազմել է 1,302,380 ՀՀ դրամ:

3.6 Էդգար Դավթյանի կողմից ներկայացված ՀՀ Տավուշի մարզ Նոյեմբերյանի համայնքապետարանի կողմից տրամադրված 23.04.2025 թվականի թիվ 2931 տեղեկանքն այն մասին, որ Էդգար Արտակի Դավթյանի 2023 թվականի փաստացի բնակության վերաբերյալ տեղեկատվություն Նոյեմբերյանի համայնքապետարանը չի կարող տրամադրել:

3.7 Էդգար Դավթյանի կողմից ներկայացված ՀՀ Գեղարքունիքի մարզ Սևանի համայնքապետարանի կողմից տրամադրված 23.04.2025 թվականի թիվ 1433 տեղեկանքն այն մասին, որ Էդգար Արտակի Դավթյանի Սևան քաղաքում 2023 թվականին փաստացի բնակվելու վերաբերյալ տեղեկանք հնարավոր չէ տրամադրել:

3.8 ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Նոյեմբերյանի բաժնի կողմից 23.04.2025 թվականին տրամադրված թիվ 85/2-2- գրությունն այն մասին, որ Էդգար Արտակի Դավթյանը Տավուշի մարզի
[REDACTED]

հասցեում 90 օրից ավել չի բնակվել:

3.9 ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Գավառի բաժնի կողմից 25.04.2025 թվականին տրամադրված թիվ 53/ գրությունն այն մասին, որ Էդգար Արտակի Դավթյանը 2023 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում 90 օրից ավելի ապրել է Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի [REDACTED]

[REDACTED] հասցեում:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք են պետական(...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա):

4.3 Օրենքի 40-րդ հոդվածի 1.1-ին մասի համաձայն՝ հայտարարագրում ներառվում է նաև հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող գույքը, ինչպես նաև այն գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այդ գույքը տնօրինում է հայտարարատուն:

4.4 Օրենքի 40-րդ հոդվածի 1.2-ին մասի համաձայն՝ փաստացի տիրապետվող գույք է համարվում հայտարարատուին սեփականության իրավունքով չպատկանող, բայց նրա կողմից հաշվետու ժամանակահատվածում 90 և ավելի օր փաստացի տիրապետվող կամ օգտագործվող (անկախ նշված իրավունքների պետական գրանցումից) անշարժ գույքը, տրանսպորտի միջոցը (բացառությամբ աշխատանքային (ծառայողական) հարաբերությունների արդյունքում անձի տիրապետմանը հանձնված անշարժ գույքի, տրանսպորտի միջոցի), թանկարժեք գույքը:

4.5 Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գույքը հայտարարագրելիս նշվում են դրամական միջոցի դեպքում՝ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը, արժույթը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առկա բանկային հաշիվների դեպքում՝ նաև հաստատության անվանումը և գտնվելու վայրը:

4.6 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ

ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.9 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.10 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.11 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.12 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.13 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին

վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող **հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Սույն գործով ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության քննիչ Էդգար Արտակի Դավթյանը Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանդիսանալով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ, թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք՝ Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ, այն է.

1) ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Գավառի բաժնի կողմից տրամադրած տեղեկության համաձայն՝ Էդգար Արտակի Դավթյանը 2023 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում 90 օրից ավելի ապրել է Գեղարքունիքի մարզի, Գավառ համայնքի, [REDACTED] հասցեում, մինչդեռ Հայտարարագրի «Բ.1.4. Հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 օրից ավելի փաստացի տիրապետվող անշարժ գույք կամ հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք, կամ անշարժ գույք, որից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն» բաժնում չի հայտարարագրել այդ տվյալը, որով խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 1.1-ին մասի պահանջը:

2) Հայտարարագրի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» բաժնում բանկային հաշվի մնացորդ չի հայտարարագրել, մինչդեռ Կենտրոնական բանկից ստացված տվյալների համաձայն՝ Էդգար Դավթյանի բանկային հաշիվներին առկա մնացորդները 2023 թվականի

տարեսկզբին կազմել է 924,999 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին՝ 913,867 ՀՀ դրամ, որով խախտել է Օրենքի 40-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը:

1-ին կետում նշված խախտմանը կապակցությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի համաձայն՝ Հայտարարագրում փաստացի տիրապետվող անշարժ գույքի վերաբերյալ տվյալը պարտադիր լրացման ենթակա տվյալ է, որը չկատարելով Էդգար Դավթյանը թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք: Էդգար Հակոբյանի կողմից Հայտարարագրում փաստացի տիրապետվող անշարժ գույքի վերաբերյալ տվյալներ չհայտարարագրելու պայմաններում հնարավոր չէ ամբողջական պատկերացում կազմել վերջինիս՝ որպես հայտարարատու պաշտոնատար անձի գույքային դրության մասին, ինչը վտանգում է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով պահպանվող հասարական շահը:

Անդրադառնալով նշված խախտման առնչությամբ Էդգար Դավթյանի կողմից ներկայացված գրավոր պարզաբանմանը, որով հայտնել է, որ 90 և ավելի օր որևէ անշարժ գույք փաստացի չի տիրապետել, այդ իսկ պատճառով չի հայտարարագրել, Հանձնաժողովն արձանագրում է, որ այն անհիմն է, քանի որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Գավառի բաժնի կողմից ստացված տեղեկության համաձայն՝ Էդգար Արտակի Դավթյանը 2023 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում 90 օրից ավելի ապրել է Գեղարքունիքի մարզի, Գավառ համայնքի, [REDACTED] [REDACTED] հասցեում, որի վերաբերյալ տվյալը նա պետք է հայտարարագրեր Հայտարարագրի «Բ.1.4. Հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 օրից ավելի փաստացի տիրապետվող անշարժ գույք կամ հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք, կամ անշարժ գույք, որից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն» բաժնում:

Անդրադառնալով 2-րդ կետում նշված խախտմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Էդգար Դավթյանի բանկային հաշիվներից առկա մնացորդները 2023 թվականի տարեսկզբին կազմել են 924,999 ՀՀ դրամ, իսկ տարեվերջին՝ 913,867 ՀՀ դրամ, մինչդեռ Հայտարարագրում բանկային հաշվի մնացորդների վերաբերյալ տվյալներ հայտարարագրված չեն: Տվյալ դեպքում Հանձնաժողովը կարևոր է համարում այն, որ չհայտարարագրված գումարը, ըստ Էդգար Դավթյանի կողմից ներկայացված պարզաբանման և գործում առկա [REDACTED] կողմից տրամադրված հաշվի քաղվածքների, գոյացել է բացառապես խախտում կատարած անձի դեկտեմբեր ամսվա աշխատավարձից և պարգևավճարից: Նշված հանգամանքը հաշվի առնելով Հանձնաժողովը փաստում է, որ խախտման արդյունքում քննարկվող նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել և հիմք

ընդունելով նաև նախորդիվ նմանատիպ դեպքով կայացված որոշումը (տես՝ ՎԻՎ/104/2025 որոշումը) գտնում է, որ Էդգար Դավթյանի կողմից 2-րդ կետում նշված խախտումը հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն:

Հաշվի առնելով այն, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի է առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, ինչպես նաև առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Էդգար Արտակի Դավթյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200 000 ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և

պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի «նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդգար Արտակի Դավթյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Էդգար Արտակի Դավթյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ